ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2690-Ա «07» հուլիսի 2025թ.

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-Ի Հ.383-Ա ՈՐՈՇՄԱՆ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ Փ.ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑԻ Հ.1/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔԻ 1-ԻՆ ԵՎ 2-ՐԴ ՀԱՐԿԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ 245.23ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի հունիսի 24-ի հ.383-Ա որոշումը՝ Կենտրոն վարչական շրջանի, Փ.Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող շենքի 1-ին և 2-րդ հարկերի ընդհանուր 245.23քմ մակերեսով տարածքներն անհատույց օգտագործման իրավունքով «Սիմֆոնիկ Ա» կրթամշակութային հասարակական կազմակերպությանը տրամադրելու մասին:

Երևան քաղաքի ավագանին 2025 թվականի հունիսի 24-ի հ.383-Ա որոշմամբ տվել է իրավունք՝ Երևան համայնքի սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 09.12.2021թ. հ.09122021-01-0408 /գաղտնաբառ՝ WTJRDWGMWFBF/ վկայական) Փ.Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող շենքի 1-ին և 2-րդ հարկերի ընդհանուր 245.23քմ մակերեսով տարածքներն անհատույց օգտագործման իրավունքով, մինչև 2028 թվականի օգոստոսի 1-ը ժամկետով «Սիմֆոնիկ Ա» կրթամշակութային հասարակական կազմակերպությանը տրամադրելու մասին:

Ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 36-րդ գլխի դրույթներով, Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2025 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.259-Ն որոշման հավելվածով.

1.Երևան համայնքի սեփականություն հանդիսացող, Փ.Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող շենքի 1-ին և 2-րդ հարկերի ընդհանուր 245.23քմ մակերեսով տարածքներն անհատույց օգտագործման իրավունքով, մինչև 2028 թվականի օգոստոսի 1-ը ժամկետով, տրամադրել «Սիմֆոնիկ Ա» կրթամշակութային հասարակական կազմակերպությանը:

2. Լիազորել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին, Երևանի քաղաքապետի անունից, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, «Սիմֆոնիկ Ա» կրթամշակութային հասարակական կազմակեր-պության հետ կնքել գույքի անհատույց օգտագործման պայմանագիր:

3. Ընդունել ի գիտություն, որ.

1) սույն որոշման 2-րդ կետով նշված պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքը՝ պետական գրանցման կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում.

2) պայմանագրի նոտարական վավերացման և դրանից բխող գույքային իրավունքի պետական գրանցման, ինչպես նաև օրենսդրությամբ նախատեսված միասնական տեղեկանք ստանալու հետ կապված ծախսերը կատարվում են «Սիմֆոնիկ Ա» կրթամշակութային հասարակական կազմակերպության կողմից:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի վրա:

6. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ